



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18-ը փետրվարի 2020 թվականի N 3-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 18-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝
1) Վաղաշեն համայնքի «Օստներ» կոչվող նորակառույց թաղամասի նոր կառուցված գազատարը համայնքի հաշվեկշիռ ընդունելու, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հետ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր կնքելու և Վաղաշեն համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 18-ի N44-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԼԷՔՍԱՆՅԱՆ ՖԵՈՂՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱԶԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Վաղաշեն, (0262)-4-36-42 vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18-ը փետրվարի 2020 թվականի N 4-Ա

ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՕՍՏՆԵՐ» ԿՈՉՎՈՂ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ
ԹԱՂԱՄԱՍԻ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳԱԶԱՏԱՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N44-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք
ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի N
76-Ա որոշումը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Վաղաշեն համայնքի «Օստներ» կոչվող նորակառույց թաղամասի նոր կառուցված 13410.0 հազար դրամ (տասներեք միլիոն չորս հարյուր տասը հազար դրամ) ընդհանուր արժեքով, 2228 մ ընդհանուր երկարությամբ գազատարը (ստորգետնյա D=57 մմ, L=30 մ, վերգետնյա d=57մմ, L=17 մ, ստորգետնյա d=108 մմ, L=1.2 մ, ստորգետնյա d=90 մմ, L=13 մ, ստորգետնյա d=63 մմ, L=128 մ, վերգետնյա d=76 մմ, L=237.2 մ, վերգետնյա d=108 մմ, L=67.1 մ, ստորգետնյա d=90 մմ, L=1478 մ, ստորգետնյա d=110 մմ, L=256.5 մ մետաղական գազատար), ինչպես նաև 1 հատ GS-74-27HU2000 գազակարգավորող բաշխիչ կայանը, 2 հատ վերգետնյա d=80 մմ, 1 հատ վերգետնյա d=100 մմ սողնակ փականներն ընդունել Վաղաշեն համայնքի հաշվեկշիռ:
2. Տալ համաձայնություն գազատարի հետագա շահագործման և սպասարկման նպատակով այն անորոշ ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը և կնքել գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագիր:
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 18-ի N44-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱԶԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒԳԱՐ՝

ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

